

ուր հետեւեալ կերպով յիշատակուած է այս վանքը. «Բարչառնեաց վանքն որ ուրիակնոց էր Հայոց վանօրհիցն, նոյն կողմն»: Ուրկանոցի վանքի յիշատակութիւնը այսչափ միայն ծանօթագրուած է. պատմութիւնը կը լռէ անոր ծագման, զարգացման և քաղաքական տակնուվրայութեանց հետեւանքով յառաջ եկած դանազան վիճակներու մասին: Հակառակ մեր պրպտումներուն, այս վանքին նկատմամբ, դժբախտաբար գոհացուցիչ տեղեկութիւններ չկըցինք ունենալ. գոհ պիտի ըլլանք մեր ձեռք բերած քիչօքի: Անաստաս վրդ.ի վերև յիշատակուած ծանօթագրութիւնը շատ մութ կէտեր ունի՝ զոր պիտի ջանանք լուսաբանել, որքան կարելի է:

2. Ո՞վ շինած է այս վանքը .

Անաստաս վրդ.ի Յուզակէն հետեւեալ պարագան որոշ կը հասկցուի թէ նոյն վանքը Ռշտունեաց նախարարութեան յուշակերտն ու ձեռակերտն է: Պատմութենէ իրազեկ կ'ըլլանք թէ Ռշտունիք շատ հին նախարարութիւն մըն էին, ըստ գիտնոց, նոյն իսկ Ուրարդական շրջանէն մնացած. շատ կանուխէն կը բնակէին Վանայ լճին հարաւային սահմաններուն վրայ. Աղթամարն էր անոնց ամրութեան բերդը և անոնց զարգացման վերջնակէտը կը նկատուի է. դարու կէսը, մինչև Թէոդորոս Ռշտունի գորավարը. նոյն ժամանակամիջոցը Ռշտունեաց անկման շրջանն է որ ատեն ձորտերը կը դառնան իրենց դրացի Արծրունեաց, որ Ռշտունիներէն աւելի զօրեղցած էին: Յայնսի է պատմութենէն Ռշտունի Թէոդորոս գորավարին կոտարած դերը Հայոց կրօնական և քաղաքապատմական դէպքերուն մէջ: Հետեւելով Սերէոսի և Յովհաննէս Կաթողիկոսի՝ կը նկատենք որ Թէոդորոս Ռշտունին Բիւզանդական շրջանին Հայաստանի վրայ կարգուած է «սպարապետ և պատրիկ», և յետոյ քաղաքական փոփոխութեանց բերումով անցած է Արաբներուն կողմը և կարգուած է ըստ Ասողիկի, «Իշխան Հայոց». և ըստ Սերէոսի, Վրաստան, Աղուանք, Սիւնիք մինչև Տէրպէնտ, անոր իշխանութեան կը յանձնուին: Իր ժամանակի քաղաքական դէպքերու հետեւանքով Ռշտունին կ'ունենայ գործունէութեան շրջան մը, մերթ փառքի և մերթ լքումի: Ան իր պաշտօնին պահանջին համաձայն, քանիցս